# ՀՀ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



*Թաղային համայնքները*

Աջափնյակ,
Ավան,
Արաբկիր,
Դավթաշեն,
Էրեբունի,
Կենտրոն,
Մալաթիա-Սեբաստիա,
Նոր Նորք,
Նորք-Մարաշ,
Նուբարաշեն,
Շենգավիթ,
Քանաքեռ-Զեյթուն

| | |
|---|---|
| Տարածքը | 227 քառ. կմ |
| ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը | 0.8% |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 4255 հա |
| այդ թվում` վարելահողեր | 1509 հա |
| Թաղային համայնքներ | 12 |
| Բնակչության թվաքանակը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ | 1111.3 հազ. մարդ |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2008թ. | 34.3% |

Վարչատարածքային բաժանումը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ

| | Տարածքը, քառ. կմ | Մայրա-քաղաքը | Բնակչու-թյան խտությունը, մարդ/կմ$^2$ | Համայնքներ | | | | Գյուղա-կան բնա-կավայրեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդա-մենը | քաղա-քային | վարչա-կան տա-րածքնե-րի ան-վանումը | գյու-ղա-կան | |
| Հայաստանի Հանրապետություն | 29743 | Երևան | 109 | 926 | 48 | 12 | 866 | 949 |
| Մայրաքաղաք Երևան | 227 | - | 4896 | - | - | 12 | - | - |

Երևան քաղաքի վարչական տարածքների ընդհանուր բնութագիրը
2008 թվականին

| | Տա-րած-քը, հա | Բնակ-չության թվաքա-նակը, հազ. մարդ | Համայնքն ընդհանուր սահմաններ ունի հետևյալ համայնքների հետ՝ | Արտաքին սահմանագծով հարում է. | Ընդգրկում է հետևյալ թաղամասերը. |
|---|---|---|---|---|---|
| Արաբկիր | 1235 | 131.1 | Աջափնյակ,<br>Ավան,<br>Դավթաշեն,<br>Կենտրոն,<br>Քանաքեռ-Զեյթուն | ՀՀ Կոտայքի մարզին | |
| Աջափնյակ | 2568 | 107.5 | Դավթաշեն,<br>Արաբկիր,<br>Կենտրոն,<br>Մալաթիա-Սեբաստիա | ՀՀ Կոտայքի մարզին | Վահագնի,<br>Սիլիկյան,<br>Անաստասավան,<br>Նորաշեն |
| Ավան | 837 | 50.9 | Արաբկիր,<br>Նոր Նորք,<br>Քանաքեռ-Զեյթուն | ՀՀ Կոտայքի մարզին | Ավան-Առինջ,<br>Նարեկացի,<br>Հովհաննիսյան,<br>Իսահակյան,<br>Թումանյան բնակելի զանգվածներ,<br>Աղի հանք,<br>Ավան |
| Դավթաշեն | 671 | 40.8 | Արաբկիր ,<br>Աջափնյակ | ՀՀ Կոտայքի մարզին | Դավթաշեն,<br>Դավթաշենի 1-4 թաղա-մասեր |
| Էրեբունի | 4841 | 120.6 | Կենտրոն,<br>Նոր Նորք,<br>Նորք-Մարաշ,<br>Շենգավիթ,<br>Նուբարաշեն | ՀՀ Կոտայքի և Արարատի մարզերին | Նոր Բութանիա,<br>Նոր Արեշ,<br>Արգիշտի,<br>Էրեբունի բնակելի համալիրներ,<br>Սարի թաղ,<br>Մուշավան,<br>Ջրաշեն |

| | Տա-րած-քը, հա | Բնակ-չության թվաքա-նակը, հազ. մարդ | Համայնքն ընդհանուր սահմաններ ունի հետևյալ համայնքների հետ՝ | Արտաքին սահմանագծով հարում է. | Ընդգրկում է հետևյալ թաղամասերը. |
|---|---|---|---|---|---|
| Կենտրոն | 1420 | 130.0 | Արաբկիր, Աջափնյակ, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն | | Կոնդ, Ձորագյուղ, Այգեստան |
| Մալաթիա-Սեբաստիա | 2580 | 141.0 | Աջափնյակ, Կենտրոն, Շենգավիթ | ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերին | Անդրանիկի թաղամաս, Նոր Սեբաստիա, Նոր Կիլիկիա, Հաղթանակ, Սպանդարյան, Արարատյան զանգված |
| Նոր Նորք | 1447 | 145.2 | Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Քանաքեռ-Զեյթուն | ՀՀ Կոտայքի մարզին | Նոր Նորքի 1-9 զանգվածներ, Ջրվեժի Բանավան, Մայակ թաղամասեր |
| Նորք-Մարաշ | 460 | 11.3 | Կենտրոն, Էրեբունի, Շենգավիթ | ՀՀ Արարատի մարզին | |
| Նուբարաշեն | 1811 | 9.6 | Էրեբունի, Շենգավիթ | ՀՀ Արարատի մարզին | |
| Շենգավիթ | 4150 | 144.6 | Կենտրոն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն | ՀՀ Արարատի մարզին | |
| Քանաքեռ-Զեյթուն | 810 | 78.7 | Ավան, Արաբկիր, Կենտրոն, Նոր-Նորք | ՀՀ Կոտայքի մարզին | |

***Երևանը*** Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն Հայաստանի Հանրապետության ներկայիս 48 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից է և ունի 2790 տարվա պատմություն (հավերժական քաղաք Հռոմի, Կարթագենի, Նինվեի և Դամասկոսի հասակակիցն է): Գտնվում է մոտավորապես նույն լայնության վրա, ինչ Վաշինգտոնը, Մադրիդը, Պեկինը:

Քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ Երևանյան գոգավորության վրա:

***Մայրաքաղաք Երևանը*** գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

***Երևանը*** Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրն է: Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու բորսաների ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը և այլն:

Մայրաքաղաքում են գործում Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուց-չությունների գրասենյակները:

Երևանը հարուստ է ճարտարապետական կառույցներով, որոնք շարունակել ու զարգացրել են միջնադարյան մայրաքաղաքների և ընդհանրապես հայկական ազգային ճարտարապետության ավանդույթները:

1828թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Երևանի խանությունն անցավ Ռուսաստանի տիրապետության ներքո՝ դառնալով Հայկական մարզ, ապա Երևանի գավառ, իսկ 1850թ. հունվարի 1-ից՝ Երևանի նահանգ (իր մեջ ներառելով 5 բնակավայրեր՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Նախիջևան, Օրդուբադ): Երևանի նահանգի կառավարումն իրականացնում էր երեք հոգուց կազմված վարչությունը: Նահանգի կենտրոն Երևանը բաժանված էր 4 թաղի, որոնք ղեկավարում էին թաղապետերը՝ յուզբաշիները և մելիքները:

1870թ. հոկտեմբերի 1-ից Երևանը Ալեքսանդր Երկրորդի հրամանով ճանաչվեց քաղաք և դասվեց կայսրության քաղաքների շարքը՝ ունենալով 12 հազ.բնակիչ: 1879 թվականին կայանում է քաղաքային դումայի անդրանիկ ընտրությունը և առաջին քաղաքապետ է ընտրվում Հովհաննես Ղորղանյանը:

Խորհրդային իշխանության տարիներին գավառական քաղաքից (1920թ. բնակչության թվաքանակը 30 հազ.-ից պակաս էր) ժամանակակից ***Երևանը*** վերածվել է հանրապետության խոշոր արդյունաբերական (արդյունաբերական ներուժի գրեթե կեսը), մշակութային և գիտական կենտրոնի, ինչպես նաև կարևորագույն տրանսպորտային հանգույցի (Երևանում հանգուցվում է Սև ծովը Պարսից ծոցին կապող երկաթգիծը և այն Բաքու-Թբիլիսի երկաթուղուն միացնող Երևան-Հրազդան-Իջևան-Աղստաֆա գիծը, տեղական նշանակություն ունի Երևան-Սևանի ավազան-Սոտք գիծը, ՀՀ գլխավոր օդային դարպասն է իր երկու՝ «Զվարթնոց» և «Էրեբունի» միջազգային օդանավակայաններով, անցնում են մի շարք ավտոխճուղիներ):

***Մայրաքաղաք Երևանը*** բնակչության թվաքանակով ամենախոշորն է հանրապետությունում:

Այն իր մեջ ներառում է 12 թաղային համայնքներ՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն, ընդգրկելով հանրապետության բնակչության 1/3-ը և բնակչության խտությամբ (4896 մարդ 1 քառ.կմ-ի վրա) գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը:

***Երևանը*** հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական գլխավոր ուղղությունը ***մշակող արդյունաբերությունն*** է:

2008թ. ***մայրաքաղաքի*** տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 49.0%,
- գյուղատնտեսություն՝ 1.1%,
- շինարարություն՝ 87.6%,
- մանրածախ առևտուր՝ 84.5%,
- ծառայություններ՝ 90.9%:

Երևանի ***արդյունաբերության*** հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

***Գյուղատնտեսությունը*** հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

***Բեռնաուղևորափոխադրումները*** իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

**Բնակչության թվաքանակն ըստ Երևան քաղաքի թաղային համայնքների**

*Հունվարի 1-ի դրությամբ, հազ.մարդ*

| թաղային համայնքների անվանումը | Բնակչության թվաքանակը | | | |
|---|---|---|---|---|
| | **2006** | **2007** | **2008** | **2009** |
| **Ք. ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՄԵՆԸ** | **1103.8** | **1104.9** | **1107.8** | **1111.3** |
| ԱՋԱՓՆՅԱԿ | 106.7 | 106.8 | 107.1 | 107.5 |
| ԱՎԱՆ | 50.4 | 50.5 | 50.8 | 50.9 |
| ԱՐԱԲԿԻՐ | 131.6 | 131.4 | 131.3 | 131.1 |
| ԴԱՎԹԱՇԵՆ | 40.4 | 40.4 | 40.6 | 40.8 |
| ԷՐԵԲՈՒՆԻ | 119.5 | 119.8 | 120.1 | 120.6 |
| ԿԵՆՏՐՈՆ | 129.7 | 129.7 | 129.7 | 130.0 |
| ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ | 140.9 | 140.6 | 140.6 | 141.0 |
| ՆՈՐ ՆՈՐՔ | 143.3 | 143.8 | 144.5 | 145.2 |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ | 11.6 | 11.5 | 11.4 | 11.3 |
| ՆՈՒԲԱՐԱՇԵՆ | 9.5 | 9.5 | 9.5 | 9.6 |
| ՇԵՆԳԱՎԻԹ | 142.2 | 142.8 | 143.8 | 144.6 |
| ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ | 78.0 | 78.1 | 78.4 | 78.7 |

Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ
Երևան քաղաքի թաղային համայնքների

*Մարդ*

| | Ծնունդ-ներ | Մահա-ցածներ | Մինչև 1 տարեկան մահացածներ | Բնական աճ (+,-) | Ամուսնու-թյուններ | Ամուսնալու-ծություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | 2005 | | | | | |
| **Ք. ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՄԵՆԸ** | **12281** | **9110** | **177** | **3171** | **5965** | **1213** |
| ԱՋԱՓՆՅԱԿ | 1052 | 828 | 9 | 224 | 509 | 112 |
| ԱՎԱՆ | 518 | 349 | 4 | 169 | 290 | 46 |
| ԱՐԱԲԿԻՐ | 1006 | 1215 | 11 | -209 | 624 | 175 |
| ԴԱՎԹԱՇԵՆ | 360 | 233 | 3 | 127 | 188 | 29 |
| ԷՐԵԲՈՒՆԻ | 1583 | 1158 | 12 | 425 | 732 | 112 |
| ԿԵՆՏՐՈՆ | 1241 | 1158 | 79 | 83 | 653 | 173 |
| ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ | 1887 | 1057 | 22 | 830 | 840 | 144 |
| ՆՈՐ ՆՈՐՔ | 1608 | 987 | 9 | 621 | 794 | 187 |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ | 83 | 142 | 0 | -59 | 53 | 11 |
| ՆՈՒԲԱՐԱՇԵՆ | 143 | 65 | 0 | 78 | 68 | 14 |
| ՇԵՆԳԱՎԻԹ | 2003 | 1303 | 19 | 700 | 850 | 143 |
| ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ | 797 | 615 | 9 | 182 | 364 | 67 |
| | 2006 | | | | | |
| Ք. ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՄԵՆԸ | 12405 | 9235 | 130 | 3170 | 6026 | 1257 |
| ԱՋԱՓՆՅԱԿ | 1118 | 889 | 7 | 229 | 553 | 102 |
| ԱՎԱՆ | 500 | 367 | 9 | 133 | 276 | 47 |
| ԱՐԱԲԿԻՐ | 1010 | 1162 | 12 | -152 | 641 | 132 |
| ԴԱՎԹԱՇԵՆ | 333 | 215 | 2 | 118 | 194 | 30 |
| ԷՐԵԲՈՒՆԻ | 1641 | 1204 | 16 | 437 | 674 | 123 |
| ԿԵՆՏՐՈՆ | 1211 | 1034 | 18 | 177 | 664 | 199 |
| ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ | 1845 | 1105 | 16 | 740 | 854 | 145 |
| ՆՈՐ ՆՈՐՔ | 1611 | 1032 | 18 | 579 | 802 | 213 |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ | 94 | 133 | 1 | -39 | 46 | 7 |
| ՆՈՒԲԱՐԱՇԵՆ | 125 | 80 | 1 | 45 | 70 | 7 |
| ՇԵՆԳԱՎԻԹ | 2099 | 1361 | 20 | 738 | 886 | 175 |
| ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ | 818 | 653 | 10 | 165 | 366 | 77 |
| | 2007 | | | | | |
| Ք. ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՄԵՆԸ | 13423 | 8800 | 91 | 4623 | 6578 | 1238 |
| ԱՋԱՓՆՅԱԿ | 1190 | 884 | 9 | 306 | 585 | 114 |
| ԱՎԱՆ | 613 | 326 | 3 | 287 | 358 | 63 |
| ԱՐԱԲԿԻՐ | 1077 | 1191 | 2 | -114 | 708 | 153 |
| ԴԱՎԹԱՇԵՆ | 372 | 187 | 3 | 185 | 217 | 28 |
| ԷՐԵԲՈՒՆԻ | 1659 | 1139 | 17 | 520 | 753 | 119 |
| ԿԵՆՏՐՈՆ | 1238 | 1028 | 14 | 210 | 760 | 157 |
| ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ | 2045 | 1017 | 16 | 1028 | 869 | 148 |
| ՆՈՐ ՆՈՐՔ | 1781 | 1013 | 6 | 768 | 873 | 198 |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ | 80 | 131 | 1 | -51 | 68 | 10 |
| ՆՈՒԲԱՐԱՇԵՆ | 133 | 79 | 0 | 54 | 64 | 3 |
| ՇԵՆԳԱՎԻԹ | 2317 | 1200 | 12 | 1117 | 898 | 160 |
| ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ | 918 | 605 | 8 | 313 | 425 | 85 |

| | Ծնունդ-ներ | Մահա-ցածներ | Մինչև 1 տարեկան մահացածներ | Բնական աճ (+,-) | Ամուսնու-թյուններ | Ամուսնալու-ծություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | 2008 | | | | | |
| Ք. ԵՐԵՎԱՆ, ԸՆԴԱՄԵՆԸ | 13984 | 9062 | 102 | 4922 | 6737 | 1333 |
| ԱՋԱՓՆՅԱԿ | 1269 | 881 | 10 | 388 | 606 | 125 |
| ԱՎԱՆ | 486 | 348 | 6 | 138 | 327 | 59 |
| ԱՐԱԲԿԻՐ | 1039 | 1195 | 4 | -156 | 717 | 152 |
| ԴԱՎԹԱՇԵՆ | 438 | 219 | 4 | 219 | 236 | 37 |
| ԷՐԵԲՈՒՆԻ | 1828 | 1198 | 10 | 630 | 740 | 105 |
| ԿԵՆՏՐՈՆ | 1287 | 984 | 14 | 303 | 655 | 184 |
| ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ | 2234 | 1063 | 18 | 1171 | 1028 | 179 |
| ՆՈՐ ՆՈՐՔ | 1852 | 1012 | 7 | 840 | 843 | 212 |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ | 112 | 123 | 2 | -11 | 72 | 8 |
| ՆՈՒԲԱՐԱՇԵՆ | 147 | 83 | 2 | 64 | 61 | 12 |
| ՇԵՆԳԱՎԻԹ | 2322 | 1341 | 20 | 981 | 995 | 178 |
| ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ | 970 | 615 | 5 | 355 | 457 | 82 |

**Երևան քաղաքի պայմանական 10000 բնակիչ ունեցող վարչական տարածքների սոցիալական մի շարք բնութագրիչներ 2008 թվականին**

| | Ընդամենը | *նրանցից`* | |
|---|---|---|---|
| | | կանայք [1] | տղամարդիկ [1] |
| Բնակչությունը, մարդ | 10000 | 5327 | 4673 |
| Ծնվածներ, մարդ | 126 | 59 | 67 |
| Մահացածներ, մարդ | 82 | 40 | 42 |
| Ամուսնություններ | 61 | X | X |
| Ամուսնալուծություններ | 12 | X | X |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 19.3 | X | X |
| Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ` | | | |
| նախադպրոցական | 216 | 107 | 109 |
| հանրակրթական | 1140 | 546 | 594 |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ | 156 | 107 | 49 |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 15 | 4 | 11 |
| միջին մասնագիտական | 144 | 98 | 46 |
| բարձրագույն մասնագիտական | 828 | 433 | 395 |

[1] *Ցուցանիշները հաշվարկային են:*

| | Ընդամենը | *նրանցից՝* | |
|---|---|---|---|
| | | կանայք [1] | տղամարդիկ [1] |
| Առողջապահության ոլորտ՝ | | | |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 39662 | … | … |
| Մարզիկներ, մարդ | 142 | 25 | 117 |
| Զբաղվածներ, մարդ | 2956 | … | … |
| նրանցից՝ գիտական հիմնարկներում | 55 | 27 | 28 |
| նրանցից՝ գիտության դոկտոր | 4 | 1 | 3 |
| գիտության թեկնածուներ | 16 | 6 | 10 |
| ուսուցիչներ | 97 | 88 | 9 |
| բժիշկներ | 80 | … | … |
| միջին բուժանձնակազմ | 76 | … | … |
| Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ | 162 | 129 | 33 |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1618 | … | … |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 215 | X | X |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | |
| գրադարան | 11136 | … | … |
| թատրոն | 2848 | … | … |
| համերգ | 1501 | … | … |
| թանգարան | 6067 | … | … |
| Իրավական ոլորտ | | | |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 43 | X | X |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 12 | X | X |
| միջին ծանրության | 9 | X | X |
| ծանր | 22 | X | X |
| առանձնապես ծանր | 1 | X | X |